ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1], 77[2], և 77[3] հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Գեղամասար համայնքի ղեկավարին՝

1) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերը համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ և 41-րդ հոդվածների պահանջներին.
2) իրավական ակտերի նախաբանում կամ բովանդակության մեջ պարտադիր նշել, որ նորմատիվ իրավական ակտերի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում տվյալ իրավական ակտը.
3) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված և ընդունվող նորմատիվ իրավական ակտերը <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով սահմանված կարգով ենթարկել պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման.
4) իրավական ակտերում կատարվող փոփոխությունները, լրացումները, գործողության դադարեցումը կամ ուժը կորցրած ճանաչելը իրականացնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ, 71-րդ և 72-րդ հոդվածների հիմքերով: Իսկ իրավական ակտերը չեղյալ համարել նույն օրենքի 75-րդ հոդվածի դրույթներով.
5) պահպանել համայնքի ավագանու նիստերի հրավիրման <<ՏԻՄ>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով սահմանված ոչ ուշ քան երկու ամիսը մեկ անգամ պարբերականությունը.
6) համայնքի ավագանու որոշումները յոթնօրյա ժամկետում առաքել մարզպետարան.
7) համայնքային ծառայության կադրերի գործերի վարումն իրականացնել Հայաստանի Հանրապետության ՏԿՆ 2006թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված կադրերի գործերի վարման կարգի պահանջներին համապատասխան.
8) համայնքային սեփականության հողատեսքերը /արոտները/ վարձակալության տրամադրել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջներով սահմանված կարգով, ճշգրտել վարձակալական պայմանագրում ամրագրված հողերի կարգերի իսկությունը /ըստ հողերի օգտագործման քարտեզների/.
9) հաշվապահական հաշվառումն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով: Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը ապահովելու նպատակով անցկացնել տարեվերջյան գույքագրում, իսկ գնումներն իրականացնել <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.

10) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հուլիսի 25-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ